

# ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ 2020 ՀԱՅԱՍՏԱՆ

12 մայիսի 2021թ.

## ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Սահմանադրությամբ ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այն ճանաչում է Հայաստանյայց առաքելական եկեղեցին (ՀԱԵ) որպես ազգային եկեղեցի և ազգային ինքնության պահպանող, բայց նաև սահմանում է, որ «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Օրենքն արգելում է, սակայն չի սահմանում հոգեորսությունը, որ կարող է օգտագործվել հարկադիր կրոնափոխություն իմաստով: Շարունակվել է բահայի հայտնի իրավաբանի գործով դատավարությունը, որին մեղադրանք էր ներկայացվել 2017թ. դեպի երկիր անօրինական միգրացիա կազմակերպելու համար: Բահայի համայնքի անդամները հավատացած էին, որ մեղադրանքի պատճառը նրա կրոնն է: Փետրվարի 18-ին Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի այն դրույթը, որով ոստիկանության ծառայողների համար սահմանվում էր կրոնական կազմակերպության անդամակցելու բացարձակ արգելք: Այս որոշումից հետո կրոնական կազմակերպության անդամակցելու համար 2018թ. համակարգից հեռացված ոստիկանական ծառայողը վերականգնվեց իր պաշտոնում: Հասարակության մեջ շարունակվում էր բանավեճը հանրակրթական դպրոցներում Հայոց եկեղեցու պատմության առարկայական ծրագիրը վերանայելու վերաբերյալ կառավարության պլանների շուրջ, ինչը տարեվերջի դրությամբ ընթացքի մեջ էր: Սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը Լեռնային Ղարաբաղում ու դրա շուրջ Հայաստանի, Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականների ու Ադրբեյջանի միջև ընթացող 44-օրյա թեժ մարտական գործողությունների ընթացքում զոհերի ու վայրագությունների մասին նշանակալի հաղորդումներ են եղել բոլոր կողմերից: Այն բանից հետո, երբ Ադրբեյջանը Թուրքիայի աջակցությամբ վերականգնեց իր վերահսկողությունը 1994թ.-ից անջատողականների կողմից վերահսկվող հարակից 4 տարածքների նկատմամբ, նոյեմբերի 9-ին Հայաստանը և Ադրբեյջանը, Ռուսաստանի միջնորդական ջանքերով, հայտարարեցին հրադադար, որի արդյունքում խաղաղ ճանապարհով Ադրբեյջանի վերահսկողությանը փոխանցվեց ևս 3 տարածք և տարածաշրջանում ռուս խաղաղապահներ տեղակայվեցին: Մարտական գործողությունների ընթացքում կառավարությունը հայտարարեց ռազմական դրություն, որի ներքո սահմանափակումներ կիրառվեցին ազատ արտահայտման, հանրահավաքներ անցկացնելու և ազատ տեղաշարժի իրավունքների նկատմամբ: Այս սահմանափակումների մեծ մասը հանվեց

դեկտեմբերի 2-ին: Եղել են կրոնական վայրերի անտեսման, ոչնչացման ու պղծման մասին բազմաթիվ միջադեպերի մասին հաղորդումներ այն վայրերից, որոնք նախկինում գտնվել են Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականների վերահսկողության տակ: Ադրբեջանի կառավարությունն հայտնում էր, որ այս տարածքներում գտնվող 67 մզկիթներից 63-ը ոչնչացվել են: Հայտնի չէր, թե դրանցից քանիսն են վնասվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում տեղ գտած նախկին մարտական գործողությունների ընթացքում՝ անտեսելու կամ միտումնավոր վնասելու պատճառով: Որոշ մզկիթներ ըստ հաղորդումների օգտագործվել են այնտեղ անասուններ, այդ թվում՝ խոզեր պահելու համար: Աշնանը տեղի ունեցած մարտական գործողություններից հետո այդ տարածքներ այցելած միջազգային լրագրողները հաստատել են Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականների վերահսկողության տակ գտնվելու շրջանում մահմեդական գերեզմանների ու գերեզմանոցների ոչնչացումը:

Կրոնական փոքրամասնությունները նշում էին, որ շարունակել են բախվել ատելության խոսքին ու իրենց համայնքների բացասական ներկայացման խնդրին, հատկապես՝ սոցիալական ցանցերում, թեպետ շատերն հաղորդում են, որ նոյեմբերի կեսերից Հայաստանի և Ադրբեջանի միջև թեժ մարտերի ավարտից հետո նկատվել է բացասական մեկնաբանությունների նվազում: Ըստ դիտորդների հակասեմական տրամադրությունները երկրում աճել են՝ պայմանավորված Ադրբեջանի կողմից հակամարտության ընթացքում Իսրայելի մատակարարած զենքերի օգտագործմամբ: Երևանի կենտրոնում գտնվող Հոլոքոստի ու Ցեղասպանության զոհերի հուշարձանը, որը խորհրդանշում է Հոլոքոստն ու ավելի քան մեկուկես միլիոն հայերի զանգվածային սպանություններն Օսմանյան Թուրքիայի կողմից, անհայտ հանգամանքներում երկու անգամ պղծվել է: Ըստ Եհովայի վկաների տարվա ընթացքում իրենց անդամներին վիրավորական խոսքերով անհանգստացնելու միջադեպեր չեն եղել: Մեկ այլ կրոնական փոքրամասնական խումբ, որը չցանկացավ իր անունը հիշատակել այստեղ, հաղորդում է ներկայացրել տարվա ընթացքում իրենց անհանգստացնելու մեկ միջադեպի վերաբերյալ: Տարբեր աղբյուրները նշում էին, որ հասարակության և ընտանիքի կողմից եկող ճնշումները էթնիկ հայերի համար շարունակում էին մնալ նշանակալի հետ պահող գործոն հայ-առաքելականից գատ այլ հավատքի դավանելու հարցում:

ԱՄՆ դեսպանը և դեսպանության այլ պաշտոնյաներ շարունակել են պետական պաշտոնյաների հետ իրենց հանդիպումներում խթանել կրոնական հանդուրժողականությունը, կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հարգանքը ու միջոգական երկխոսությունը: Դեսպանը և դեսպանության այլ պաշտոնյաները երկրում կրոնական ազատության հետ կապված իրավիճակը քննարկելու նպատակով պարբերաբար հանդիպել են փոքրամասնական կրոնական խմբերի հետ, այդ թվում՝ ավետարանական քրիստոնյաներ և այլ բողոքականներ, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու (Հիսուս Քրիստոսի եկեղեցու) հետևորդներ, եզդիներ, հրեական համայնք, առաքելական

ասորիներ, հիսունականներ և բահայիներ, ինչպես նաև մահմեդական համայնքի անդամ անհատներ: Դեսպանության պաշտոնյաները պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ քննության են առել կրոնական խմբերի ու հայկական համայնքների համար կրոնական նշանակության վայրերի վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքները:

## **ՄԱՍ I. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՄՆ կառավարության գնահատմամբ ընդհանուր բնակչությունը կազմում է շուրջ 3.0 միլիոն (2020թ. կեսերի դրությամբ): Ըստ 2011թ. մարդահամարի բնակչության մոտ 92 տոկոսն իրեն բնորոշում է որպես հայ-առաքելական: Մյուս կրոնական խմբերը ներառում են. Հռոմեական կաթոլիկներ, Հայկական Մխիթարյան միաբանության անդամ կաթոլիկներ, ուղղափառ քրիստոնյաներ և ավետարանական քրիստոնյաներ, այդ թվում՝ Հայկական ավետարանական եկեղեցու հետևորդներ, հիսունականներ, յոթերորդ օրվա ադվենտիստներ, բապտիստներ, խարիզմատիկ քրիստոնյաներ և Եհովայի վկաներ: Կան նաև Հիսուս Քրիստոսի եկեղեցու և Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցու հետևորդներ, քրիստոնյա-մոլոկաններ, եզդիներ, հրեաներ, բահայիներ, սունի մահմեդականներ, շիա մահմեդականներ և նախաքրիստոնեական դավանանքի հետևորդ հեթանոսներ: Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) 2019թ. դեկտեմբերին հրապարակած հարցման տվյալներով բնակչության 97 տոկոսն իրեն համարում է հայ-առաքելական, 2 տոկոսը՝ այլ կրոնի և 1 տոկոսը՝ կրոն չունեցող: Հրեական համայնքի տվյալներով հրեաների թիվը երկրում մոտ 800-1.000 հոգի է:

2011թ. մարդահամարի տվյալներով երկրում բնակվում են ավելի քան 35.000 եզդի, չնայած վերջին շրջանի որոշ գնահատումներով այս թիվը կազմում է շուրջ 50.000 հոգի: Եզդիները հիմնականում կենտրոնացված են Արագած լեռան շրջանում գտնվող գյուղական բնակավայրերում՝ մայրաքաղաք Երևանից դեպի հյուսիս-արևմուտք: Հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են հյուսիսում: Մահմեդականները հիմնականում շիաներ են, այդ թվում՝ իրանցիներ և ժամանակավոր կացություն ունեցող անձինք Միջին Արևելքից:

## **ՄԱՍ II. ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՐԳԱՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

### ***Իրավական դաշտ***

Մահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և

հրապարակավ կամ մասնավոր կարգով պաշտամունքի ծիսակատարություններով՝ օրինակ՝ քարոզ կամ եկեղեցական արարողություններ, արտահայտելու ազատությունը: Սահմանադրությունը թույլ է տալիս սահմանափակել այս իրավունքը պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Սահմանադրությունը սահմանում է, որ «կրոնական կազմակերպություններն» անջատ են պետությունից: Այն ճանաչում է «Հայաստանյայց առաքելական եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սահմանադրությամբ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը կրոնական ատելություն բորբոքելու նպատակով:

Օրենքն արգելում է, սակայն չի սահմանում «հոգեերսությունը», եզրույթ, որն օգտագործվում է բնութագրելու թե՛ դավանափոխությունը, և թե՛ հարկադիր կրոնափոխությունը: Օրենքն արգելում է, որ երկրից դուրս գտնվող հոգևոր կենտրոններ ունեցող կրոնական կազմակերպությունները ֆինանսավորում ստանան այդ արտաքին կենտրոններից, բայց օրենքի այս պահանջն իրագործելու մեխանիզմ չկա: Օրենքը նաև արգելում է կրոնական կազմակերպությունների ֆինանսավորումը կուսակցությունների կողմից և կուսակցությունների ֆինանսավորումը կրոնական կազմակերպությունների կողմից:

Օրենքը չի սահմանում կամ կարգավորում օտարերկրացի կրոնական կամավորների կացության կարգավիճակը:

Օրենքի համաձայն գրանցված կրոնական խմբերը կարող են ապահովել իրենց հավատացյալների հոգևոր-կրոնական կարիքների ու պահանջմունքների բավարարումը. կատարել կրոնական ժամերգություններ, ծեսեր ու արարողություններ, ստեղծել կրոնական ուսուցման խմբեր, զբաղվել աստվածաբանական, կրոնական և պատմամշակութային ուսումնասիրություններով, պատրաստել հոգևորական ծառայության կամ գիտական ու մանկավարժական կադրեր, ձեռք բերել և օգտագործել կրոնական նշանակության առարկաներ ու նյութեր, օգտվել լրատվության միջոցներից, կապեր հաստատել այլ երկրների եկեղեցական կազմակերպությունների հետ և զբաղվել բարեգործությամբ: Օրենքը կրոնական խմբերի գրանցման պահանջ չի սահմանում, սակայն գրանցումն անհրաժեշտ է խմբի անունից գործարքներ կատարելու համար (օրինակ՝ սեփականություն ունենալ, վարձակալել գույք կամ բանկային հաշիվներ բացել): Օրենքը չի սահմանում չգրանցված խմբերի իրավունքները:

Որպես իրավաբանական անձ գրանցվելու համար կրոնական համայնքը պետք է Պետռեգիստր ներկայացնի փորձագիտական եզրակացություն Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնից առ այն, որ համայնքը համապատասխանում է օրենքի պահանջներին և հիմնված է «պատմականորեն

կանոնացված որևէ սուրբ գրքի» վրա: Այն պետք է նաև «զերծ լինի նյութապաշտությունից և ուղղված լինի հոգևոր ոլորտները», ունենա առնվազն 200 չափահաս անդամ և իր ուսմունքով մտնի «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մեջ: Օրենքը չի սահմանում, թե ինչ է նկատի առնվում «զերծ է նյութապաշտությունից» ասելիս և չի հստակեցնում, թե կրոնական որ համայնքներն են «համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի» մաս: Օրենքը սահմանում է, որ այս գրանցման պահանջների ցանկը, որի մասով համապատասխանությունը հաստատվում է Ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերով բաժնի կողմից, չի վերաբերվում այն կրոնական կազմակերպություններին, որոնք հիմնված են ազգային փոքրամասնություն ճանաչված որևէ խմբի, այդ թվում՝ ասորիների, քրդերի, ռուսների և եզդիների և այլոց կրոնի վրա: Կրոնական համայնքը կարող է Պետոեզիստրի որոշումը դատական կարգով բողոքարկվել:

Քրեական օրենսգրքով արգելվում է «կրոնի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը», որի համար սահմանվում է 200.000 ՀՀ դրամ (390 ԱՄՆ դոլար) տուգանքից մինչև կալանք՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակը լիազորված է զբաղվել պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման պաշտոնյաների կողմից թույլ տրված մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, այդ թվում կրոնական ազատության խախտումներով:

Օրենքն արգելում է Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ), դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական համակարգի և փրկարարական ծառայության աշխատակիցներին լինել կրոնական կազմակերպության անդամ, սակայն օրենքը չի սահմանում, թե ինչ է նշանակում «անդամակցությունը» կրոնական կազմակերպությանը: Օրենքն արգելում է ոստիկանության, զինված ուժերի և ԱԱԾ ծառայողներին, ինչպես նաև դատախազության աշխատակիցներին, մաքսային ծառայողներին, դիվանագետներին և այլ պետական, համայնքային ու քաղաքացիական ծառայողներին օգտագործել իրենց ծառայողական դիրքը «կրոնական միավորումների» շահերի համար կամ նրանց օգտին քարոզչության համար: Օրենքով նաև արգելվում է ոստիկանների, դատախազների, այլ պետական ու քաղաքացիական ծառայողների կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս այլ կրոնական գործունեություն իրականացնելը: Թեպետ օրենքը սահմանում է «կրոնական կազմակերպությունը» որպես հավատի համատեղ դավանության, ինչպես նաև կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում, սակայն «կրոնական միավորման» սահմանում չի տրվում: Զինծառայողն իրավունք չունի ստեղծել կրոնական միավորումներ: Իսկ եթե զինծառայողը հանդիսանում է կրոնական միավորման անդամ, ապա իրավունք չունի զինվորական

ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնել քարոզչական գործունեություն:

Քրեակատարողական օրենսգիրքը քրեակատարողական հաստատություններին թույլ է տալիս կրոնական արարողությունների համար հրավիրել եկեղեցականների և օգտագործել կրոնական առարկաներ ու գրականություն: Բանտարկյալները կարող են խնդրել հոգևոր աջակցություն՝ իրենց նախընտրած կրոնական խմբից: Պաշտպանության նախարարության և ՀԱԵ-ի համատեղ պայմանավորվածությամբ միայն ՀԱԵ հոգևորականները կարող են ծառայել որպես զինվորական քահանա:

Օրենքը ՀԱԵ-ին հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, գորամասերում, և ազատազրկման վայրերում ազատ մուտքի ու մշտական ներկայացուցիչ ունենալու իրավունք է վերապահում, մինչդեռ մյուս կրոնական խմբերը կարող են ներկայացուցիչ ապահովել հիշյալ կառույցներում միայն տվյալ հաստատության ղեկավարից թույլտվություն ստանալու դեպքում: Օրենքը նաև նախատեսում է, որ պետությունը չի միջամտի ՀԱԵ-ի՝ ողջ երկրի տարածքում ազատորեն քարոզչություն իրականացնելու և իր հավատը տարածելու ազգային եկեղեցու մենաշնորհ հանդիսացող իրավունքի իրացմանը:

Օրենքը սահմանում է, որ հանրակրթական դպրոցներում ուսուցումն աշխարհիկ է, և նշում, որ «կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»: Թեպետ հանրային և մասնավոր դպրոցներում Հայոց եկեղեցու պատմություն (ՀԵՊ) առարկայի դասավանդումը կատարվում է դպրոցի ընտրությամբ, սակայն եթե դպրոցն ընտրում է այդ առարկան, ապա տվյալ դպրոցի բոլոր աշակերտների համար այն դառնում է պարտադիր առարկա 5-11-րդ դասարաններում. չկա աշակերտին կամ նրա ծնողին առարկայից հրաժարվելու հնարավորություն տվող դրույթ:

ՀԱԵ-ն իրավունք ունի մասնակցել ՀԵՊ առարկայի ուսումնական ծրագրերի և դասագրքերի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը: Թեպետ եկեղեցին կարող է առարկան դասավանդող ուսուցիչների թեկնածություններ առաջադրել, սակայն ՀԵՊ ուսուցիչները հանդիսանում են պետական աշխատողներ: Օրենքը ՀԱԵ-ին իրավունք է շնորհում կազմակերպել կրոնական ուսուցման կամավոր արտաձրագրային դասընթացներ պետական կրթական հաստատություններում: Մյուս կրոնական խմբերը կարող են իրենց անդամների համար կրոնական ուսուցում իրականացնել իրենց պատկանող հաստատություններում, սակայն ոչ հանրակրթական ուսումնական հաստատությունների տարածքում:

Աշխատանքային օրենսդրությամբ գործատուներին արգելվում է աշխատակիցների կրոնական հայացքների մասին տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը: Աշխատանքային օրենսդրության մեջ կատարված փոփոխություններով, որոնք Ազգային ժողովն ընդունեց հունիսի 2-ին, նախատեսվում է ազգային, կրոնական

տոները կամ հիշատակի օրերը նշելու համար տարեկան մինչև չորս օր չվճարվող արձակուրդի տրամադրում աշխատողին՝ անկախ կրոնական պատկանելությունից:

Այն անձանց համար, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայություն անցնելը, օրենքը սահմանում է պարտադիր երկամյա զինվորական ծառայության երկու այլընտրանք՝ այլընտրանքային (զենքի հետ կապ չունեցող) զինվորական ծառայություն 30 ամիս տևողությամբ կամ այլընտրանքային աշխատանքային ծառայություն 36 ամիս տևողությամբ: Այլընտրանքային ծառայությունից խուսափելը համարվում է քրեորեն պատժելի արարք, որի համար նախատեսված պատժամիջոցները, պայմանավորված գործի հանգամանքներով, կարող են լինել 2 ամսվա կալանքից մինչև 8 տարվա ազատազրկում:

Քրեական օրենսգրքով արգելվում է բռնության կոչերով կրոնական աստելության հրահրումը հրապարակային հայտարարությունների, լրատվության կամ հանրային դիրքն օգտագործելու միջոցով և դրա համար սահմանվում է տույժ 200.000-ից 500.000 ՀՀ դրամի սահմաններում (390-970 ԱՄՆ դոլար) կամ ազատազրկում 3-ից 6 տարի ժամկետով:

Երկիրը Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մասնակից պետություն է:

### ***Կատավարության գործունեությունը***

Տարվա ընթացքում բահայական համայնքի ականավոր դեմքերից մեկը՝ Էդուարդ Մանասյանը շարունակում էր մեղադրվել 2017թ. Հայաստանում հաստատվելու ցանկություն ունեցող իրանցիներին խորհրդատվություն ապահովելու միջոցով դեպի երկիր անօրինական միգրացիային աջակցելու մեջ: Ութ ամիս նախնական կալանքի տակ գտնվելուց հետո 2018թ. հուլիսին նա ընդհանուր իրավասության դատարանի կողմից գրավով ազատ էր արձակվել: Հուլիսի 17-ին վերաքննիչ դատարանը մերժել էր ԱԱԾ-ի դեմ բահայական համայնքի կողմից 2019թ. ներկայացված երկու հայցերը՝ կապված բահայական համայնքի անդամներին նախքան Մանասյանի ձերբակալումը հսկողության տակ առնելու հարցով մտահոգությունների հետ: Բահայական համայնքի հայցում նշվում էր, որ ԱԱԾ-ն ապօրինաբար գաղտնալսում է կիրառել՝ հսկելով գրասենյակը, ինչպես նաև համայնքի քարտուղարին, և այդ կերպ ձեռք բերված տեղեկությունները օգտագործել է որպես հիմք Մանասյանին մեղադրանք ներկայացնելու համար: Այս որոշումների առնչությամբ բահայական համայնքի վճռաբեկ բողոքը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր: Մանասյանի դատավարությունը տարեվերջի դրությամբ շարունակվում էր:

Ըստ աղբյուրների տարվա ընթացքում «ՎԵՏՕ» նախաձեռնության հիմնադիր Նարեկ Մալյանը և նրա աջակիցները շարունակել են հալածել Մարդու իրավունքների եզդիական կենտրոնին ու վերջինիս հիմնադիր Սաշիկ Սուլթանյանին, ինչն

իրականացվում էր այդ կառույցի դոնոր/ֆինանսավորող կազմակերպության՝ «Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի» դեմ ուղղված ոտնձգությունների ընդգրկումն արշավի շրջանակում: Մեպտեմբերի 8-ին Մայանը հայտարարեց, որ դիմել է ԱԱԾ-ին Սուլթանյանի դեմ քրեական գործ հարուցելու նպատակով՝ մեղադրելով վերջինս իրաքյան մի լրատվամիջոցի տված հարցազրույցի ընթացքում, որտեղ խոսել է երկրում եզդիական համայնքի խնդիրների մասին, ազգային կրոնական թշնամանք հրահրելու մեջ: ԱԱԾ-ը քրեական գործ հարուցեց այդ մեղադրանքի հիման վրա, որը քաղաքացիական հասարակության կազմակերպությունները որակում էին որպես կեղծ ու հիմնազուրկ: Թեպետ Սուլթանյանն այս գործով որպես մեղադրյալ ներգրավված չէր, սակայն ըստ քաղաքացիական հասարակության տարեվերջի դրությամբ ԱԱԾ-ը շարունակում էր քննությունը նրա և Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի նկատմամբ՝ խոչընդոտելով կազմակերպության աշխատանքներին և անհանգստություն պատճառելով այս ՀԿ-ի հետ կապ ունեցող անձանց ու կառույցներին:

Երկրի մասնավոր և հանրային դպրոցների մեծ մասում շարունակվել է Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը 5-11-րդ դասարաններում:

Եզդիական համայնքի ներկայացուցիչները կրկին դժգոհություն են հայտնել Հայոց եկեղեցու պատմություն առարկայի պարտադիր լինելու վերաբերյալ, որը նրանք որակում են որպես «կրոնական ինդոկտրինացիա»: Միայն եզդի աշակերտներ ունեցող դպրոցները կարողացել են առարկան հանել իրենց առարկայացանկից, սակայն խառը դպրոցներ հաճախող եզդի երեխաները պարտադրված էին սովորել այս առարկան՝ անկախ ծնողների առարկություններից: Եղել են առանձին հաղորդումներ, որ Երևանի առնվազն մեկ հանրակրթական դպրոցում և եզդիաբնակ գյուղերի 2 դպրոցներում առարկան չի դասավանդվել:

ՀԱԵ-ի հետ առնչություն չունեցող որոշ կրոնական խմբեր կրկին փաստում էին, որ որևէ առարկություն չունեն հանրակրթական դպրոցներում ՀԵՊ դասավանդման վերաբերյալ, չնայած որոշներն առարկություններ ունեին աղոթքների ու խաչակնքվելու վերաբերյալ, որոնք ըստ հաղորդումների տեղի էին ունենում այս առարկայի դասաժամերին և նշում էին, որ ցանկանում են տեսնել ՀԱԵ-ից զատ այլ կրոնական խմբերի ավելի ճշգրիտ նկարագրեր: Քրիստոնեական մի խումբ հայտնում էր, որ կրոնական հարցերի շուրջ կրթությունը կարևոր է, սակայն այն պետք է ընդգրկի «Հայաստանում տարածված բոլոր կրոնները»:

ՀԿ-ները, այլ կրոնական կազմակերպությունները, աթեիստները, ՀԱԵ-ի ոչ հավատացյալ անդամները շարունակել են հրապարակային մտահոգություններ հայտնել ՀԵՊ առարկայում իրենց որակմամբ կրոնական ինդոկտրինացիայի տարրերի առկայության վերաբերյալ, ինչպես նաև ՀԱԵ-ի հետևորդ լինելն ազգային ինքնությանը նույնացնող նյութերի վերաբերյալ:

Հունիսին կառավարությունը հայտարարեց ՀԵՊ առարկան հանրակրթական դպրոցի պարտադիր առարկաների ցանկից հանելու պլանների մասին, որը հանրային



բանավեճի թեմա դարձավ: Շատ անհասներ, այդ թվում՝ ծնողներ, ուսուցիչներ և ՀԱԵ եկեղեցական ծառայողներ գտնում էին, որ դասընթացն օգնում է հայկական ինքնության վրա հիմնված արժեքային համակարգ ձևավորելու հարցում, իսկ մյուսները կարծում էին, որ դպրոցները պետք է մնան աշխարհիկ, իսկ բարոյական արժեքները կարող են ձևավորվել նաև ՀԵՊ դասընթացից դուրս: Աղբյուրները նշում էին, որ տարեվերջի դրությամբ դեռևս շարունակվում էր կառավարության կողմից հանրակրթական ծրագրերի ու չափորոշիչների հիմնարար վերանայման գործընթացը:

«Եվրասիա համագործակցության հիմնադրամ» ՀԿ-ը կրկին մտահոգություններ էր հայտնում այն մասին, որ ՀԵՊ ընթացիկ դասընթացը և դրա բովանդակությունը բացասաբար է անդրադառնում կրոնական փոքրամասնությունների իրավունքների վրա: Հիմնադրամը նաև ողջունեց կրթության նախարարության կողմից հանրակրթական առարկաների մասով նոր կրթական չափորոշիչների մշակումը՝ փաստելով, որ դրանք մշակելու ընթացքում հաշվի են առնվել Հիմնադրամի մի շարք առաջարկներ, որոնք կօգնեն առկա մտահոգությունների լուծմանը:

2020-21 ուստարվա պաշտոնական տվյալները հասանելի չէին, սակայն 2019-20 ուստարվա ընթացքում 2-4-րդ դասարանների համար նախատեսված ընտրովի «ՀԵՊ/քրիստոնեական դաստիարակություն» առարկան ընտրել է 74 դպրոց:

Զինված ուժերի հոգևոր առաջնորդության ծրագիրը, որ պաշտպանության նախարարության և ՀԱԵ-ի համատեղ նախաձեռնությունն է, շարունակում է այդ ծրագրում ներգրավել միայն ՀԱԵ-ի հոգևորականներին:

Ըստ Արդարադատության նախարարության պաշտոնական տեղեկատվության կալանքի տակ գտնվողների ու դատապարտյալների հոգևոր կարիքները բավարարելու համար ՀԱԵ հոգևորականները կանոնավոր այցելել են քրեակատարողական հիմնարկներ, անցկացրել մկրտություններ, պատարագներ և նշել տոները: Մարտի 16-ին նոր կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության ռեժիմ սահմանվեց, որով արգելվեց «կրոնական ծեսերի կազմակերպումն ու դրանց մասնակցելը»՝ վերջ դնելով քրեակատարողական հիմնարկներ հոգևորականների այցերին կարանտինի շրջանում, որը հանվեց սեպտեմբերին, և քրեակատարողական հիմնարկներում սկսվեց կրոնական սահմանափակ ծառայությունների ապահովումը՝ խստիվ հետևելով նախազգուշական միջոցներին:

Փետրվարի 11-ին ընդհանուր իրավասության դատարանը բավարարեց Կրոնի և իրավունքի կենտրոնի կողմից Վայոց Ձոր մարզի Ելփին համայնքի մի ուսուցչի անունից դպրոցի տնօրինության դեմ ներկայացրած հայցը: Ըստ Կրոնի և իրավունքի կենտրոնի՝ ուսուցչի հանդեպ կրոնական հողի վրա խտրականություն էր դրսևորվել և նրա դասաժամերը կրճատվել էին այն բանից հետո, երբ աշակերտների ծնողները նրան մեղադրել էին «աղանդավոր» լինելու մեջ, քանի որ նա ավետարանական քրիստոնեական եկեղեցու անդամ էր: Կենտրոնը պահանջել էր չեղյալ համարել նրա դասաժամերը կրճատելու մասին 2017թ. որոշումը, վերականգնել նրա կողմից դասավանդվող ժամաքանակը, վճարել աշխատավարձը ողջ ժամանակահատվածի

համար և ճանաչել կրոնական հողի վրա խտրականության ենթարկվելու փաստը: Դատարանի վճռով ուսուցիչը վերականգնվել էր իր պաշտոնում, վճարվել էր նրա աշխատավարձը, բայց դատարանը չէր ճանաչել խտրականության փաստը:

Փետրվարի 18-ին Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց Ոստիկանությունում ծառայության մասին օրենքի այն դրույթը, որով ոստիկանության ծառայողների համար սահմանվում էր կրոնական կազմակերպության անդամակցելու բացարձակ արգելք: Որոշման մեջ Սահմանադրական դատարանը նաև փաստեց, որ կրոնական կազմակերպություններին անդամակցելը՝ որպես ազատ արտահայտման ձև և միաժամանակ միավորման ազատության իրականացման եղանակ, կախված չէ որևէ ռազմականացված մարմնում, այդ թվում՝ ոստիկանությունում ծառայելու փաստից:

Հունիսի 4-ին ընդհանուր իրավասության դատարանը բավարարեց 2018թ. Կրոնի և իրավունքի կենտրոնի կողմից ոստիկանության ծառայող Էդգար Կարապետյանի անունից ներկայացված հայցը: Էդգար Կարապետյանն ազատվել էր աշխատանքից այն հիմքով, որ նա հաճախում էր Ավետարանական քրիստոնեական եկեղեցի և ըստ ոստիկանության հանդիսանում էր կրոնական կազմակերպության անդամ, թեպետ կրոնական կազմակերպությունների կողմից ընդունված չէր անդամների հաշվառումը: Կարապետյանը վերականգնվեց իր պաշտոնում և ողջ ժամանակահատվածի նրա աշխատավարձը վճարվեց:

Թեպետ երկրից դուրս գտնվող հոգևոր կենտրոններից կրոնական կազմակերպություններին ֆինանսավորում տրամադրելն արգելող իրավական դրույթի կիրառման մեխանիզմ չկար, սակայն մի շարք կրոնական կազմակերպություններ փաստել են, որ հարգել են այդ արգելող դրույթը և սահմանափակել իրենց գործունեությունը, քանի որ չեն ցանկացել խախտել օրենքը:

Օգոստոսից սկսած տեղի եկեղեցիների որոշ օտարերկրացի կամավորների մերժվում էր կացության թույլտվության երկարաձգումը, քանի որ պատկան մարմինների կողմից նորովի էին մեկնաբանվում այդ հարցին առնչվող օրենքներն ու ընթացակարգերը: Պետական պաշտոնյաները նշում էին, որ եկեղեցիները կարող են սկսել վճարել իրենց կամավորներին ու այդ դեպքում հնարավորություն կունենան դիմել աշխատանքային թույլտվության կամ էլ նրանք կարող են դուրս գալ երկրից ու նորից մուտք գործել՝ ստանալով ևս 180 օր երկրում մնալու թույլտվություն: Այս դրույթն ազդեցություն ունեցավ որոշ եկեղեցիների վրա, որոնք որոշեցին սահմանափակել իրենց կամավորների ծառայությունը մինչև 180 օր:

Եհովայի վկաները նշում էին, որ նոր կորոնավիրուսով պայմանավորված դադարեցրել են եկեղեցիների կառուցումը, ուստի, ի տարբերություն նախորդ տարիների, պաշտամունքային վայրեր կառուցելու հարցում դժվարությունների չեն բախվել: Նոր կորոնավիրուսով պայմանավորված նրանք մեծամասամբ կասեցրել են իրենց շինարարական աշխատանքները, չնայած որոշ մանր վերանորոգումներ կատարվել են: Տարեվերջի դրությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում

ընթացքի մեջ էր մեկ գործ՝ կապված Եհովայի վկաների սեփականության իրավունքով պատկանող տարածքում պաշտամունքային վայր կառուցելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի արգելքի հետ: Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը շարունակում էր իր շինարարական նախագծերի անարգել իրականացումը և նախատեսում էր նոր եկեղեցիների կառուցում հաջորդ գարնանից:

Տարեվերջին այլընտրանքային քաղաքացիական ծառայություն էին անցնում Եհովայի վկաների 127 հետևորդ, իսկ 2019թ. նրանց թիվը կազմում էր 129 հոգի: Այլընտրանքային ծառայությունը ներառում էր զբաղվածություն տարբեր հիվանդանոցներում, տեղական կոմունալ ծառայություններում, կանաչապատման աշխատանքներում, գիշերօթիկ դպրոցներում, տուն-ինտերնատներում ու մանկատներում: Աշնան հակամարտության ընթացքում կառավարությունը այլընտրանքային քաղաքացիական ծառայության մեջ գտնվողներին թույլ տվեց շարունակել ծառայությունն այդ ձևաչափով: Բացի այդ, գրեթե բոլոր դեպքերում, երբ ակտիվ ծառայության էին զորակոչվում նախքան Եհովայի վկաներին անդամակցելը զինվորական ծառայություն անցած Եհովայի վկաների հետևորդներ, նրանք ազատվում էին ծառայությունից, երբ փաստում էին Եհովայի վկաների հետևորդ լինելու հանգամանքը կամ ներկայացնում էին համապատասխան փաստաթղթեր: Ըստ կառավարության աղբյուրների այս ծրագրերին մասնակցողները միայն Եհովայի վկաներն են, որոնցից ոչ մեկը չի ընտրում այլընտրանքային զինվորական ծառայություն (մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված զինվորական ծառայություն): Եհովայի վկաները փաստում էին, որ Լեոնային Ղարաբաղի դե-ֆակտո իշխանությունները, որոնք վայելում էին Հայաստանի աջակցությունը, իրենց թույլ էին տալիս անարգել դավանել իրենց հավատքին այդ վայրերում, սակայն մերժում էին գրանցել որպես կրոնական կազմակերպություն, ինչպես նաև չէին ապահովում դավանական համոզմունքներից ելնելով զինվորական ծառայություն չանցնելու իրավունքը: Նրանք նաև հաղորդում էին, որ Լեոնային Ղարաբաղում բնակվող Եհովայի վկաների բոլոր հետևորդները տարհանվել են Հայաստան և ոչ մեկին չի պարտադրվել ծառայել զինված ուժերում:

Ըստ ՀԱԵ խոսնակ Վահրամ Մելիքյանի՝ կառավարության և ՀԱԵ հարաբերությունների հարցերով աշխատանքային խումբը ձևավորումից հետո շարունակաբար հանդիպումներ է ունեցել՝ քննարկելու փոխադարձ հետաքրքրության հարցեր, այդ թվում՝ երկրի քաղաքացիների հոգևոր առողջության հարցը:

Կառավարության «Ազգային անվտանգության ռազմավարությամբ», որն ընդունվեց հուլիսին, ազգային արժեքների ձևավորման հարցում կարևորվում էր Հայ կաթողիկե եկեղեցու, Հայ ավետարանական եկեղեցու, Հայ առաքելական եկեղեցու և Քրիստոնեության դերը: Ռազմավարությամբ ազգային արժեք էր ճանաչվում հարգանքը և հանդուրժողականությունը ուրիշ մարդկանց, ժողովուրդների, կրոնների նկատմամբ: Այն շեշտում էր Հայաստանի և Սփյուռքի հետ հարաբերություններում այս երեք եկեղեցիների ունեցած կարևոր դերակատարումը և ընդգծում կառավարության

հանձնառությունը լիարժեք պաշտպանել երկրում բնակվող յուրաքանչյուր անձի իրավունքներն ու ազատությունները: Ռազմավարությունը նաև ընդգծում էր էթնիկ փոքրամասնություններին ու խոցելի խմբերին հասարակական կյանքի ու պետական կառավարման բոլոր օղակներում լիարժեք ինտեգրելու կարևորությունը: Ռազմավարությունը նաև փաստում էր, որ պետությունը հանձնառու է ազգային, կրոնական, էթնիկ, ռասայական խմբերի և նրանց անդամների կյանքի իրավունքի պաշտպանությանը, ինչպես նաև ցեղասպանության կանխարգելմանը:

Լեոնային Ղարաբաղում ու դրա շուրջ Հայաստանի, Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականների ու Ադրբեջանի միջև ընթացող 44-օրյա թեժ մարտական գործողությունների ընթացքում զոհերի ու վայրագությունների մասին նշանակալի հաղորդումներ են եղել բոլոր կողմերից: Այն բանից հետո, երբ Ադրբեջանը Թուրքիայի աջակցությամբ վերականգնեց իր վերահսկողությունը 1994թ.-ից անջատողականների կողմից վերահսկվող հարակից 4 տարածքների նկատմամբ, նոյեմբերի 9-ին Հայաստանը և Ադրբեջանը, Ռուսաստանի միջնորդական ջանքերով, հայտարարեցին հրադադար, որի արդյունքում խաղաղ ճանապարհով Ադրբեջանի վերահսկողությանը փոխանցվեց ևս 3 տարածք և տարածաշրջանում ռուս խաղաղապահներ տեղակայվեցին:

Ադրբեջանի կառավարությունն հայտնում էր, որ այդ տարածքներում գտնվող 67 մզկիթներից 63-ը ոչնչացվել են: Հայտնի չէր, թե դրանցից քանիսն են վնասվել Լեոնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում տեղ գտած նախկին մարտական գործողությունների ընթացքում՝ անտեսելու կամ միտումնավոր վնասելու պատճառով: Կային նաև հաղորդումներ մահմեդական կրոնական վայրերի պղծման մասին: Սոցիալական հարթակներում տեսանյութեր էին շրջանառվում, որտեղ երևում էին խոզեր և վնասված կրոնական զարդագրեր Զանգիլանի մզկիթում, կովեր Ադղամի Զումայի մզկիթում և խոզեր Կուբաթլու տարածքի Մամարի մզկիթում: Հայ դիտորդները նշում էին, որ դրանք բեմադրված տեսանյութեր են, կամ որ կովերն ինքնակամ են մտել մզկիթի տարածք: Աշնանը տեղի ունեցած մարտական գործողություններից հետո այդ տարածքներ այցելած միջազգային լրագրողները հաստատել են Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականների վերահսկողության տակ գտնվելու շրջանում մահմեդական գերեզմանների ու գերեզմանոցների ոչնչացումը:

Լեոնային Ղարաբաղի որոշ մասերի նկատմամբ ադրբեջանական վերահսկողություն հաստատելուց հետո Ադրբեջանի կառավարությունը տարածքը նախկինում վերահսկած Հայաստանի աջակցությունը վայելող դե-ֆակտո իշխանություններին մեղադրեց որոշ կրոնական վայրերի կապը ադրբեջանական ժառանգության հետ վերացնելու փորձերի մեջ: Օրինակ՝ Լեոնային Ղարաբաղի դե-ֆակտո իշխանություններն իրանական ֆինանսավորմամբ Շուշայում վերանորոգել էին Յուլիսարի Գովհար աղա մզկիթը՝ այն անվանելով «պարսկական մզկիթ»:

### ՄԱՍ III. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՆՔԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Ըստ մի շարք փոքրամասնական կրոնական խմբերի, մասնավոր լրատվամիջոցների բացասական պատկերները և ատելության խոսքը շարունակում էին մնալ իրենց համայնքների առջև ծառայած ամենադժվար խնդիրներից: Մեկ այլ կրոնական փոքրամասնական խումբ հայտնում էր, որ իրենց անդամների համար հավատքը ազատորեն կիրառելու ամենազգալի խոչընդոտը հասարակական և ընտանեկան ճնշումներն էին: Փոքրամասնական կրոնական խմբերից կային հաղորդումներ անհանգստություն պատճառելու կամ ոտնձգությունների դեպքերի ավելացման վերաբերյալ, ինչը կապվում էր փոքրամասնական խմբերի անդամներին սխալմամբ օտարերկրացի համարելու հետ:

Լեոնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի հետ հակամարտությունը նպաստել է հակասեմական տրամադրությունների մեծացմանը, ինչն ըստ հրեական համայնքի անդամների և այլ դիտորդների մեծապես վերագրվում էր Ադրբեջանի կողմից հակամարտության ընթացքում Իսրայելի արտադրած զենքերի օգտագործմանը: Ըստ դիտորդների սոցիալական հարթակներում կրկին հայտնվել են խիստ վիրավորական հակասեմական գրառումներ, որոնք որոշ դեպքերում զուգորդված են եղել ծաղրանկարներով, որտեղ հրեաները վիրավորական կերպով են ներկայացվել: Վիրավորական գրառումները հատկապես տեղ են գտել հակակառավարական անանուն օգտատերերի ֆեյսբուքյան գրառումներում, որոնք թիրախավորել են միջազգային մի հիմնադրամի հրեա ղեկավարին: Ըստ հրեական համայնքի անդամների և այլ դիտորդների՝ աշնան թեժ մարտական գործողությունների ընթացքում ավելացել է հակասեմական գրառումների քանակը: Հրեական համայնքի անդամները նշում էին, որ հանրային տրանսպորտում ևս իրենց ուղղվել են հակասեմական բնույթի մեկնաբանություններ: Երևանի կենտրոնում գտնվող Հոլոքոստի ու Ցեղասպանության զոհերի հուշարձանը երկու անգամ պղծվել է: Նախ հոկտեմբերի 14-ին այն ներկով էր ծածկվել, իսկ հոկտեմբերի 22-ին փայտով խարույկ էին վառել բրոնզաձույլ հուշարձանի մոտ, ինչ արդյունքում այն գունաթափվել ու վնասվել էր: Հրեական համայնքի անդամները վնասվածք վերականգնել են:

Այլ կրոնական խմբերի կողմից եղել են հաղորդումներ իրենց անհանգստություն պատճառելու միջադեպերի մասին: Կրոնական մի կամավոր հայտնում էր, որ Արտաշատ իր բնակության վայր վերադառնալու ճանապարհին իր կողքով անցնող մեքենայի միջից ուղևորը պատուհանից ինչ-որ բան է ցույց տվել նրան, որը կարծես զենք լիներ: Մի քանի անգամ Գյումրիում կրոնական կամավորների կողքով անցնող անձինք ապտակել են կամավորներին: Կամավորները միջադեպերի մասին ոստիկանությանը չեն հայտնել:

ԱԱԾ շարունակում էր կրոնական ատելություն հրահրելու մեղադրանքով 2018թ. հարուցված քրեական գործը 2018թ. ստեղծված ֆեյսբուքյան մի էջի առնչությամբ, որն

ըստ ստեղծողների իբրև կապված էր և «Կյանքի խոսք» եկեղեցու և վարչապետ Նիկել Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ: Տարեվերջի դրությամբ գործը դեռ լուծված չէր:

Ըստ Եհովայի վկաների իրենց անդամների նկատմամբ կրոնական համոզմունքները հրապարակավ դրսևորելու ընթացքում, ի տարբերություն նախորդ տարիների, չեն եղել վիրավորական խոսքերով անհանգստացնելու միջադեպեր: Մեկ այլ կրոնական փոքրամասնական խումբ, որը չցանկացավ իր անունը հիշատակել այստեղ, նշել է տարվա ընթացքում իրենց անհանգստացնելու մեկ միջադեպ:

Կա մեկ շիա մզկիթ, որը գտնվում է Երևանում և սպասարկում է մահմեդական բոլոր խմբերին:

#### **ՄԱՍ IV. ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Դեսպանը և դեսպանության մյուս ներկայացուցիչները շարունակել են պետական պաշտոնյաների, այդ թվում՝ արտաքին գործերի նախարարության ու կուսակցությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում խթանել կրոնական հանդուրժողականությունն ու միջդավանական երկխոսությունը: Դեսպանության պաշտոնյաները Կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարության և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի պաշտոնյաների հետ քննության են առել կրոնական խմբերի ու հայկական համայնքների համար կրոնական նշանակության վայրերի վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքները:

Դեսպանը և դեսպանության մյուս պաշտոնյաները պարբերաբար հանդիպել են փոքրամասնական կրոնական խմբերի, այդ թվում՝ ավետարանական քրիստոնյաների և այլ բողոքականների, Եհովայի վկաների, Հիսուս Քրիստոսի եկեղեցու հետևորդների, եզդիների, հրեական համայնքի, առաքելական ասորիների, հիսունականների, բահայիների, ինչպես նաև անհատ մահմեդականների հետ և քննարկել կրոնական ազատության վիճակը երկրում: Մի քանի առիթով դեսպանը հրապարակավ շեշտել է ներառական հասարակության կարևորությունը, որտեղ կարծիքների ու համոզմունքների բազմազանությունը ողջունելի է ու խրախուսելի: Դեսպանության պաշտոնյաները քաղաքացիական հասարակության հետ ևս քննարկել են կրոնական ազատության հարցը, այդ թվում՝ փոքրամասնական կրոնական խմբերին ուղղված խտրականության վերացումը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության ազդեցությունը կրոնական խմբերի և հայկական համայնքների համար էական կրոնական վայրերի վրա: